
ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ...

ԱԼՄԱՍՏ ԶԱՔԱՐՅԱՆ

...Հավերժ սիրելի և այքերիս առջև կենդանի կանգնած Ակսելի յուրաքանչյուր բառի ու դարձվածքի մեջ մերթ մրմնջում են, մերթ երգում Հայաստան աշխարհի երկնահաս լեռներն ու անդնդախոր վիհերը, անհուն երկինքն ու արագավազ գետերը և այդ ամենից վեհ ու պայծառ՝ Հայաստանի հրաշք արևը:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

... մենավոր գագաթ է Բակունցը... որի ավիշից տակավին կարող է օգտվել մի ամբողջ դար...

ՀԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՆՑ

Եվ այսպես. չարը տանելով – երանի տալով մեր այսօրյա հրաշք թուխ մանուկներին, իրենց գալիք օրերին՝ նորից նոր փորձենք գուշակել: Չէ՛, ինչու գուշակենք: Դիմելով «Թվերի լեզվին» (Ե. Չարենց) շարունակենք վերձանել մեր սրբազան «Մատյան գնդի» (Հր. Մաթևոսյան) ծածկագիր-գաղտնագրերը: Թվերի լեզվով=տարբերիվ-ամսաթվերի եղելություն-իսկությունների համընկնումներով... փաստացի:

Հայտնի է. 1935-ի հունիսին Վ. Սարոյանը լինում է Երևանում, և իր իսկ վկայությամբ մտերմություն է հաստատում Վ. Թոթովենցի, Զ. Եսայանի, Գ. Մահարու հետ, նորաստեղծ Օպերայում ունկնդրում-ձայնակցում-հիանում է Սարոյի «արիաների» Շարա Տայանի կատարումներով¹: Փաստացի հունիսի 27-ին էլ հանդիպում է «սովետահայ գրողներին»² և այլն:

Բայց մի թե չի հանդիպել ո՛չ Մ. Սարյանին, ո՛չ Ա. Բակունցին: Բնականաբար, կասկածելի էր: Եվ, ահա՛, պարզվում է հանդիպել է. այն էլ... ընդհատակյա... ա՛յն էլ... ինչպիսի՛: Նախ՝ Սարյանին, ապա՝ Բակունցին:

Վերձանենք. Վ. Սարոյանի 1960–1970-ական թվականների երևանյան հարցազրույցներից առավել խորքայինը, հիրավի, հարցազրույցն է պատմական հարափոփոխ հոգեբանության սուր զգացողությամբ օժտված երախտավոր գրականագետ Լևոն Մկրտչյանի հետ: Սարոյանի գնահատությամբ. «Լևոն Մկրտչյան, որ փրոֆեսորեն շատ բարձր մարդ մըն է» (166)=անշուշտ, նաև ծանրակշիռ պա-

¹ Տե՛ս Վ. Ս ա ռ ոյ ա ն. Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր. Երևան, 1999, էջ 166, 182 (այսուհետև էջերը կնշվեն մեջբերումներին կից՝ բնագրում):

² Սովետահայ գրականության տարեգրություն. Երևան, 1957, էջ 284:

տասխաններով հղի մտածված հարցերով: Ասել կուզի և որոշակի վստահությամբ...

Եվ ահա՛, Երևանի պետական համալսարանի ուսանող-դասախոսների հետ հանդիպման հարցազրույցում՝ 1978 թ. հոկտեմբերի 16-ին, ասես, իմիջիայլոց Մարոյանը նետում, ապա կրկնելով շեշտադրում է. «Իմ ամենեն սիրած փայնթըրներ (գեղանկարիչներ.– Ալ. Ջ.) աշխարհքի մեջ, ամբողջ աշխարհքի մեջ (կհուսամ սխալ չհասկնաք) առաջինն է՝ իմ բարեկամ Մարտիրոս Մարոյան, երկրորդն է (ան մարդը, դժբախտաբար, չկարողացա ծանոթանալ)... Մինաս Ավետիսյան, որ անանկ մեծ տաղանդ մըն է»(191):

Դե՛, «առաջին բարեկամը» = «սխալ չհասկնաքով» = հուշում է Մարոյանի հետ առաջին ծանոթություն=բարեկամությունը 1935-ի հունիսից: Միանգամայն վավերական տվյալներով (181):

Այսպիսի. Տարեգրական հայտնի գրառումով Մ. Մարոյանը 1935-ի հունիսի վերջերին Գորիսում ստեղծել է «Գորիսի քարայրում», «Չանգեզուրի լեռները» և այլ կտավներ, այլև անթիվ մատիտանկարներ: Բայց և մի առանձնակի «արարողությամբ» ու սիրով Ակսել Բակունցի մոր մեծադիր դիմանկարը, որ նվիրել է մայրապաշտ որդուն: Ու այդպես էլ մնացել է տանը, և տաբուի կարգավիճակով տեղ չի գտել հրատարակված Տարեգրության էջերում: Դե՛, վկայողը մոր դիմանկարն է՝ Բակունցի երկու եղբոր մեծարժեք, առավել ևս՝ ողբերգորեն սրտառուչ հուշերով հանդերձ: Սույն միանգամայն հավաստի հուշարկումով. ըստ որի իր ժամանակի այն ավտոմեքենայով, որով Մ. Մարոյանը այդ օրերին հասել է Գորիս, նույն մեքենայով՝ հաջորդ առավոտյան Ալեքսանդրը մեկնել է Երևան՝³:

Սակայն ոչ թե Երևան, այլ... Էջմիածին: Իր իսկ Մարոյանի վավերական = երկդիմի ինքնակա հուշարարությամբ: Եվ, ահա՛, լինում է, այնպես է լինում, որ թվերի լեզվին գումարվում է հայոց սիմվոլների լեզուն: Նույն Լ. Մկրտչյանի հետ հարցազրույցի պատասխաններով. «...Մեկ Հայաստան կա ան ալ հոս է, և ամեն մեկ հայ չորս կողմ աշխարհքին լուր կուզե առնի Հայաստանեն և կուզե այցելել: Ես բախտավոր եմ եղեր, որովհետև 1935-ին, երբ որ քսանվեց տարեկան էի՝ մեկ գիրք ունեի՝ այցելեցի: Կուզեի մոտենալ Բիթլիսին: Եվ մոտեցա Բիթլիսին: Գացի Էջմիածին, անտեղ մարդ մը կար, ըսի՝ Բիթլիս ու՞ր է: Ըսավ՝ ասանկը ուղղակի քալե՛ մեկ օր, երկու օր, երեք օր, չորս օր, ... ութ օր քալե՛ս՝ քալե՛ս՝ կուզաս Բիթլիս: Գնա՛: Ես ալ ըսի՝ հիմա չեմ երթա, հիմա ծիրան կուտեմ: Ծիրանի ծառ կար էնտեղ, ծիրան կերա: 1935-ին աշխարհք փոխվավ, 35-են վերջ» (182): (Չարմանալի է, իրոք, այդ «ութը»... ո՞ր զգայարանով...): Եվ... Այդ մարդը Ակսել Բակունցն էր: Որ Մարոյանը իրապես շեշտադրում է նույն հարցազրույցի վերջին հատվածներում՝ այն էլ իմաստային մի քանի առումով: Ինչպես ասում ենք՝ խփելով նույն մեխին. ապա ուշագրավ այլ հարց-պատասխաններով= էապես փաստացի:

«...Երկու տարիեն կհուսամ պատեհություն ունենամ գալու և մանավանդ աս խորհրդով, որ միշտ կըսես, ու միշտ կըսես ու դաս պիտի տամ, դաս պիտի տամ

³ Տե՛ս Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1999, էջ 151 (այսուհետև էջերը կնշվեն մեջբերումներին կից՝ բնագրում):

ան դրամատիզմեն, որ երիտասարդներ չեն գիտեր, ինչպես սկսել դրամա գրել: Հիմնական դրաման, հիմնական դրամա ն: Հին-հին դրամա պետք չի գար: Մանավանդ պիտի փափագիմ գալ մեր Հրաչյա Ղափլանյանի նոր դրամատիզմներու խաղ մը երկու տեսնելու, որ վերջերս գրվեր է: Նոր, լավ խաղ Երևանի կյանքեն, հիմնական կյանքեն: Թագավորներ... հերիք է, ադ կյանքեն չէ: Ես կուզեի այս տարի... «Ծիրանի ծառ» տեսնել: Որ ծիրանի ծառ մեծ, սիմվոլիկ արժեքներ ունի հայոց հոգիին մեջ, և աստեն «Ծիրանի ծառին» երգը: Ադ տեսակ անուշ երգ չկա. դուք ադ երգը գիտեք. չէ՞. ամեն մարդ գիտե: Չէ՞ նե «Ծիրանի ծառ» լսած չեք...» (189):

Հագար ավա՛ղ ու ավստս. երկու տարի հետո Մարոյանը չեկավ-չիրագործեց «Երիտասարդների չիմացած» «ինչպես սկսել դրամա գրելու» բաղձանքը: Բայց, դե, քաղաքերված հատվածը չէ՛ թե «նոտքից գոլխ» հուշարարություն է «երիտասարդների չիմացած» պատմական այն ամենի, ինչ մի ամբողջ հարյուրամյակ վիճակված էր հարազատ ժողովրդին-Հայրենիքին:

Բայց չէ որ կա «Ծիրանի ծառ» = «սիմվոլիկ արժեքով»: Որ սարոյանական երկդիմի այլախոսությամբ նշանակում է, թե = «Ծիրանի ծառի» կողքին «Ծիրանի փողը» = բակունցյան «սիմվոլիկ արժեքով» ... Որ նշանակում է նաև. թե՛ եթե Մոսկվայում Չարենցի հետ հանդիպման նշանաբանը «Ես իմ անուշ Հայաստանին» էր, Ակսելի դեպքում եղել է «Ծիրանի ծառ» = «Ծիրանի փողը» = նույնպես սրբագան... «Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի և նոր խնդությամբ հնչեցնում է մեր արդար երգերը»⁴ դողանջով...

Մարոյանի այս երկդիմի-երկիմաստ-եռիմաստ հուշարկմանը, բաղձանք-երազանքին, – մեր այսօրյա թուխ մանուկները, ինչ խոսք, արձագանքելու են արվեստների ու գրականության շա՛տ ու շա՛տ տեսակներով, ժանրերով, միջոցներով. ինչպես հենց այսօր Ջիվան Գասպարյանը. և, սակայն, թվում է, իր խոհական-հուզական հոգով ու ոգով «չէ՛ նե» = պետք է որ անդրադարձած լինի ինքը Մարոյանը... անկասկած:

Ի՞նչ 1935-ի հունիսյան ա՛յդ օրերին: Եթե ոչ միայն Մահարու, այլև Ակսելի նվիրական սիրո՛ւ Մարիամ Ասլամազյանի հուշերից (97), գիտենք, որ Ակսելը՝ քնարական մեղմ, ցածր, թավշե-թախժոտ ձայնով սիրում էր երգել Կոմիտասի՝ յուր մեծ ուսուցչի երգերը, – ապա անկարելի է թե Մարոյանի համար երգած չլինի «Ծիրանի ծառը». բայց և «Մոկաց Միրզեն»... ճեմարանական տարիների հարազատ-հյուրընկալ որևէ խցում, ծանոթ ծառերի տակ, լճակի ափերին: Ամեն դեպքում օտար խուզարկու աչքերից հեռու. դեռևս արթուն տարաբախտ Խորեն Ա Մուրադբեկյանի կաթողիկոսական հսկումով...

Ուրեմն և կրկին դառնանք 1978-ի հարցազրույցին:

Ասես նախագալով, թե վերջին անգամ է լինում Հայրենիքում, – տպավորությունն այն է, որ Մարոյանը հարցազրույցում վերհիշելով-վերակրկնելով ջանում է հաստատապես ամրագրել իր նախորդ այցելությունների «դասերը», մտածում-

⁴ Ա. Բ ա կ ու Ն ց. Երկեր չորս հատորով. հ. 1, Երևան, 1976, էջ 205 (այսուհետև հատորը և էջերը կնշվեն մեջբերումներին կից՝ բնագրում):

ներն ու պատգամները: Եվ ահա՛, «Ծիրանի ծառի» կողքին՝ այլևայլ հուշարկունների թվում հայտնվում է 1976-ի հարցազրույցներից մեկում տեղ գտած՝ «Իմ ամենեն սիրած, ինձ համար միակ Աբովյան է» (166) խոստովանությունը: Կտրուկ պատասխան՝ այսպես ասած, «կրած ազդեցությունների» տարտամ հարցի, որ մինչ այդ մտաբերել էր մի այլ զրույցում նա: Թերևս արդեն ... Աբովյանի «Մեր առ Հայաստանիս» այս չափատողերը.

Հայաստան իմ քաղցրիկ Հայաստան,
Ճամբեցիր զիս անհաց, անպաշար,
անդարման,
Անրնկեր, աննպաստ...

Դե՛, հիմա էլ հարկ է համարում ներկայացնել ավելի «հիմնավոր» տարբերակով. «... Մեր գրողներեն, ստախոս չեմ կրնա ըլլալ. բայց չկարդալով որևէ մեկ ինձի չազդեց, մինչև որ մայրս քիչ մը «Նարեկ» չկարդաց: Ադի ինձի լուրջ թվաց, թե ի նչ հարուստ է հայոց լեզուն, և ադ հարստություն ես փափագեցա հասկնալ ու գործածել... Օր մը ինձի հարցուց. «Վերք Հայաստանի» լսե՛ր ես: Ես ան ատեն 12 տարեկան էի. ըսի.

– Չէ, պատմե: Նախ չեմ գիտեր «Վերք Հայաստանի» ի նչ ըսել է: Հայաստան՝ գիտեմ, բայց վերք՝ չգիտեմ:

Ըսավ՝ Ցավերը Հայաստանի, ըսավ՝ Աբովյան մը կա, Խաչատուր Աբովյան, որ հիանալի գիրք մէ գրեր: Եվ ադիկ կհիշեմ, իմ անոր ազդեցություն: Կրացատրե, ձևով մը հայոց լիթերաթյուրի արժեքներ ինձի հասավ անոր միջոցով» (192):

Դիպուկից-դիպուկ է հնչում՝ «Եվ ադեկ կհիշեմ անոր ազդեցություն»... Եվ սակայն...

«Լո՛ւ-լո՛ւ-լո՛ւ» – որ ծանրակշիռ մասնեբաժնով հասցեագրված է ոմն Ռոբերտ Խաչատրյանի, որն իր գաղափարատիրության միջոցին արգելել էր «Վերքի» Մուրեն Քոչարյանի դասական ասմունքը. լռության մատնված տաբուների շարքում, թերևս, ձայնակավառակի առ այսօր անհայտ ճակատագրով: Ուրեմն և կրկին «Լո-լո...». որքանով Մարոյանը Մարոյան չէր լինի, եթե հասկացնել չտար, տեղ չհասցներ ասելիքը մի այլ լիարժեք շեշտադրումով. «Հա, Մուրեն Քոչար: Մուրեն Քոչար պիտի առնե Նարեկ քիչ մը և պիտի գրաբարով երգե, այսինքն՝ պիտի խոսի, բայց անոր խոսել երգ է: Պիտի երգե «Նարեկ» և ան պիտի լմննա: Ուրիշ մեկ մը անզլերեն պիտի ըսե, կհասկնա՞ս, թարգմանություն ականջի խնդիր է, լսելու խնդիր է, մենակ կարդալու խնդիր չէ: «Նարեկ» սիմֆոնի է, բարձր սիմֆոնի է: Եվ ադպիսով ուրիշ ժողովուրդ պիտի մտիկ ընե ադ մյուզիկ, որ «Նարեկի» լեզվին մեջն է: Մեծ արտիստ մը, Մուրեն Քոչարի պես, և արդեն իրենց լեզվով թարգմանություն է, որ պիտի չունենա ադ երգ, ադ մարդ» (194):

Չլեղվենք, քանի որ «հայոց լիթերաթյուրի արժեքներ», ինչ խոսք, իրեն են հասել շատ հիմնավոր ուսումնասիրությամբ, – կարելի է թե ուսումնասիրության կարող նույնպես տաբու, որոնցից վսեմներից մեկն էլ, ահա, – Մարոյանի համար բախտորոշ հանճարեղ Աբովյանն է՝ ի դեմս Ակսել Բակունցի և իր «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպի. մեզ հասած անզուգական-դասական երեք մասով.

անկասկած երեքն էլ հնչած էջմիածնում. «Լիբեր Արմենիեր», «Դեպի լյառն Մասիս», «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի» = Եվ քանի որ «Իմ ամենեն սիրած... Աբովյան է», և անկասկած սրբազան կնքահայրը Ավետիք Բասահայկյանն է (Փարիզում գտնվող), պարտավորված ենք «Վերքի» 100-ամյակի (1940 թ.) իսահակյանական մեկնություն-գնահատությունից քաղաբերել գեթ մի հատված. «Չարմանայի՛, անհունորե՛ ն զարմանայի հրաշք-երևույթ է «Վերք Հայաստանին»:

Այնտեղ Հայաստան աշխարհն էր իր տարերային-տիտանային պեյզաժներով, որոնք դարձել են բնապաշտական, կոսմիկական երաժշտություն, օրատորիաներ: Այնտեղ հայ ժողովուրդն է՝ իր միջակայն և պատմական անցյալով, իր հին առասպելներով և ավանդություններով, մի հին ազգ, որը կոթնած դարերի վրա, զինված իր երկաթե տոկունությամբ, իր հոյակապ ճարտարապետության բեկված կոթողների շուրջը, թեև ցնցոտիների մեջ, սակայն հարուստ է փառավոր անցյալի ծիրանին հազած, թեև լծի տակ, սակայն հպարտ է և իբրև տեր հայրենի երկրի...»⁵ (ընդգծումը մերն է. – Ալ. Չ.):

Ուրեմն և, իր հերթին էլ Բասահայկյանը կնքահայրն է եղել և Բակունցի. ըստ հարկի քաղաբերենք և «Մթնաձորից» սկսած Բակունցի արվեստի իսահակյանական բնութագիր-սահմանումը. այն է. «Նրա ստեղծագործությունների վրա... անհատական կնիք է դրված. այնքան թարմ են և ինքնուրույն և զգացված ամեն մի պատկերն ու արտահայտությունը... այնպես նուրբ, կարծես հեքիաթ են, կարծես երազ ես տեսնում, այնպես կախարդորեն հալվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա և իրական ներկան դառնում է երազ...»⁶:

Վերապահության հեռավոր նշույլ իսկ... չի ք. պատմվածքների հասցեին ասված «կախարդորենը» նույնությամբ վերաբերում է անավարտ վեպին: Ուրեմն և մնում է միայն պատկերացնել 1935-ի հունիսյան այդ օրերի ոգեղեն մթնոլորտի ու հարազատության վսեմության չափն ու որպիսությունը... Ծայր առած այրական խոհական-հուզական հարց ու փորձով... Չէ որ Մարոյանը լրաբեր-լրատար էր = և «1935-ին աշխարհ փոխվավ, 35-են վերջ» = հավատամքային հաստատուն վերջնագրով = «Իմ ամենեն սիրած... Աբովյան է» աննահանջ նշանաբանով...

Եվ այսպես. տեսնես հարազատ ո՞ր խցում, ո՞ր անկյունում սկսում է կարդալ Ակսելը. «Լիբեր Արմենիերի» առաջին հատվածը. «Ոչ Սուրբ Իոհաննի տաճարը, ոչ Գրանիտե դղյակը, որտեղ ըստ ավանդության ապրել է շվեդների Գուստավ Ադոլֆ թագավորը և ոչ էլ Քարե կամուրջը, որ կապել էին Ստեֆան Բատորիի ժամանակ, – չէին ստեղծել այն հռչակը, որ ուներ Դորպատը մի դար առաջ» (3, 260):

⁵ Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 5, Երևան, 1977, էջ 177:

⁶ Նույն տեղում, էջ 140: Տեղն է լրացնել-ամբողջացնել և բնաբանի սարյանական առաջին հատվածները. «...Մշտասևեռ, ներհուն և թախծոտ հայացքով նա ասես հավաքել էր ուզում նորածագ արևի փրկարար գորությունը և կիզել ինչ-որ անլուծելի գաղտնիքների հանգույցը:

Մինչև այսօր էլ այրում են մեր հոգին սրբազան երդման պես անարատ նրա սրտաբուխ «Ծիրանի փողը», «Խոնարհ աղջիկը», «Միրհավը», «Սև ցելերի սերմնացանը» և, վերջապես իր՝ Խաչատուր Աբովյանի նման ողբերգորեն անավարտ «Խաչատուր Աբովյանը» (տե՛ս Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, էջ 5):

Այս տողերից սկսած, սիրելի՛ ընթերցող, անավարտ, Աստված տա ավարտված՝ վեպի գալիքի վերծանող-մեկնաբանողներին հազար էրանի. քանի որ հանձարեղ գրչով և զարմանալի երևակայությամբ միայն կարելի էր ստեղծել երբևէ աչքով չտեսած, Աբովյանի ուսանած տարիներից էլ «մի դար առաջ» հիմնադրված Դորպատի հնօրյա և Աբովյանի ուսանելու օրերի տեսքը, վարք ու բարքը, տարբեր խավերի կենսաձևը, համալսարանական էլիտար և ուսանողական կյանքի ողջ նրբություններով. հապա տիկին Էլոիզի վերթերյան և Արմենիերի սիրո զարթոնքի անձեռակերտ պատկերները... ո՞րը ասես: Եվ այդ ամենը վայելելու «երանին» երևի թե 2-3 կամ 4 օրով՝ վիճակված և պատկանում էր Մարոյանին:

Ըստ այդմ, ընդունենք, որ գոնե նվազագույն ծաղկաքաղով պետք է անավարտ վեպից ներկայացնենք ի՛նչ-ի՛նչ հատվածներ, որոնց արձագանքները ակներև են մանավանդ 1935-ին անմիջականորեն հաջորդած Մարոյանի ժառանգության էջերում: Հասկանալի է, տպավորվածության աստիճանով, թերևս, կամ առհասարակ այլաբանական-այլախոսական ընդհատակյա ֆաբուլային չափ ու կշռով՝ այսպիսիք. «Օրենքը կրիայի քայլեր է անել տալիս այն մարդուն, որ կարող էր թռչել արծվի պես. օրենքը երբեք մի մեծ մարդ չստեղծեց, մինչդեռ ազատությունը հսկաներ է առաջ բերում և դուրսագուններ... Տուր ինձ մի գունդ ինձ նման կտրիճների, և Գերմանիան կդառնա մի հասարակապետություն, որի առջև կուսանաց վանքեր կթվան Հռոմն ու Մայարտան...» = «Ըմբոստ հոգի թմրեցնելու»(3,312) վկայված տողեր, որոնց միանգամից հետևում են առակային-այլաբանական սույնպիսի խոսակցություններ. «-Նա մի արջ է, որ կարող է անձնատուր լինել, եթե միայն սեղմես նրա ականջը...». «Օ՛, նա քաջ գիտի աշխարհագրություն և պոետիկա, և լեզուներ էլ լավ գիտի, բայց և այնպես կատարյալ արջ է...»

-Միրելի Արմենիեր, չվիճենք Մունջ Արքայի հետ,- կիսակատակ ասաց Թովմասը,- նա մեծ վարպետ է արջաբանության և ինքը կես մարդ, կես արջ է, ինչպես վկայում է նրա արտաքինը, որ այսօր ավելի ուռած է». «Իսկ Մունջ Արքան կանգնել էր քուրքը լայն բաց արած: Քուրքի աստառի վրա, բազմաթիվ գրպանների միջից երևում էին շշերի գլուխները, ինչպես գինետան դարակների վրա...» (3,313) և այլն: Եվ սա կենդանի, դինամիկ, մի շոուանման դրվագ է Արմենիերի և ուսանող ընկերների դորպատյան մի հայտնի պանդոկում կրկնվող խնջույքներից, որը այլաբանություն-այլախոսությամբ, ինչ խոսք, արժանացել է Մարոյանի լիաթոք քա հ-քահին. զբաղեցնելով հանդերձ տևականորեն:

Հիրավի, «Մթնաձորից» սկսած բակունցյան այլախոսությունը = այլաբանություն -արջախոսությամբ ասել է և համայն կենդանա-բուսական = շրջանակով տեսական-գաղափարական առանձնակի հարցեր են = որպես այդպիսին էլ քննության են առնվել առանձին, տվյալ դեպքում հետաքրքիր է Մարոյանի վերաբերմունքը, որ բառացի կտրականապես միանշանակ-ընդհանրական է: Այն է. «Ես Փոքր Ասիայի ծնունդ եմ, ուրեմն, իմ մտքում այլաբանականն ու իրականը շաղախվել են իրար: Ինձ համար յուրաքանչյուր իրականություն այլաբանական իմաստ ունի» (141): Հավատամք, որ կրկնել է բազմիցս, անկասկած նաև ակուն-

քային լիարժեք ուսումնաստությամբ բակունցյան այլաբանությունից, առավել ևս - համակ արևելականությունից՝ այլք-այլք դրսևորված անավարտ վեպի էջերում. ինչպես. «Ահա ձեռք է բերել Ռոբերտ Քեր Պորտերի ուղեգրությունը և շտապում է իր բարեկամին ցույց տալու գիրքը և գրքի նկարները՝ Երևանի բերդը և Արարատը, պարսիկ սարբազներին և հարեմի մանկամարդ պարսկուհուն, որ զուգված կանգնել է՝ ձեռքին Գյուլիստանի վարդը. ասես հարցնում է, ո՞վ է գեղեցիկ՝ ինքը, թե վարդը: Եվ նորից խոսք է բացվում հեռավոր Իրանի և Արմենիայի մասին, և նրա բարեկամը (ասել է՝ Պարրոտը.- Ալ. Չ.), նաև նրա դուստրերը հավանում են Ֆաթայի շահի նկարը, նրա հանդերձը և նույնիսկ շահի հռչակավոր միրուքն են հավանում, բայց չեն հավանում պարսիկ կնոջ հանդերձները և «ծածկելն նոցա զերեսս ամենքին անհաճոյ երևին. և յիրաւի անհաճոյ» (3, 323):

Ասել է Փոքր Ասիայի = Արևելքի հրաշալիքներն ու գեղեցկությունները, հմայքներն ու քմայքները: Բայց և Եվրոպայի համար անընդունելի ավանդական «անհաճոյ» ցավերը... բայց և հիշենք. այնուամենայնիվ = հնադարյան պարսից գրականության ու արվեստների խորհրդանիշ Գյուլիստանի վարդը... Թերևս կրկին դառնալու խոստումով... Հետաձգենք նկատելով՝ է՛, մեր օրերում էլ ավելի քան «անհաճոյ» է այս համայնական մերկությունը՝ «յիրաւի անհաճոյ» ...

Բայց շարունակենք Սարոյանի ասած՝ «Փոքր-ասիական» իրական-այլաբանականի խորհուրդը = Իսահակյան-այլև Շանթ-Բակունց-Սարոյան և դարձյալ «հիշողությունը-երևակայություն է- երևակայությունը-երազանք» = «թևավոր երազանք» աղեղով՝ վերծանելու համար հայոց գեղարվեստական տոհմիկ մտածողության ինքնակա այլ հատկանիշներ: Դարձյալ քաղաքերելով փոքր-ասիական խոսուն մի հատված. «... Երբեմն այդ կարոտն այնքան էր նեղում նրան, որ չէր հանգստանում, լսելով հրապարակի աղմուկը կամ քրքրելով այն իրերը, որ հետն էր բերել: Նա չէր հանգստանում, երբ Պարրոտի տանը տեսնում էր Խորասանի այն խալին ու դայլանը, որ նրանք միասին գնել էին Երևանի Չարսու բազարում: Ինչպես մայրը, երբ հանկարծ մտաբերում է մեռած որդուն, միայնակ լաց է լինում և թել մանում, ողբ է ասում՝ մաքրելով ցորենը, այնպես էլ նա զլուխը տետրակի վրա կախած արտագրում էր օրինակներ Երից կանոնի և ինքն իրեն ղնդնում էր.

Շորորա, Շուշան, շորորա,

Շորորա, ծաղիկ, շորորա...» (3, 321)

Չկասկածե՛նք. հայոց Հայրենիքում հունիսը աստվածային է՝ մերձակա ծաղկավառ Վարդավառի «Վարդ ու Սոխակի» փառապսակով. և «սիմֆոնիկ Նարեկին» անկարելի է թե հետևած, Սարոյանին հմայած չլինի Ակսելը -

Շուշանըն շողեր յովտին,

Շողշողեր դեմ արեգական... -

նարեկացիական «Վարդավառին տաղի» անձկալի շողշողուն նվագներով: Հիացրած չլինեք, այլև բացատրած հարազատ ժողովրդի անտիկյան մտածողության-տոհմիկ մտածելակերպի բուն էությունն ու մանրամասները: Գեղարվեստական տեսակ մը այլախոսական-այլաբանական դարձդարձումով ու հա-

կադարձումով. ասենք՝ ո՛չ տեսել եմ, ո՛չ լսել առօրեական ասացվածքի հակադարձումով = տեսել-լսել, շարժվել-գործել զգայական հատկանիշների միաձույլ միասնությամբ: Որ դժվար չէ գուշակել, որսալ, արձագանքել-ձայնակցել՝ տեսակ մը զարմանքով ողորկված հույզով ու մտածումով:

Ուրեմն և վերը քաղված հատվածում զգայական հուշարարությամբ տեսնել-լսելով հաշվարկենք մեր սպուպապերի ժամանակներում՝ աշխարհում ամենագեղեցիկը ճանաչված, մեր ժրջան տատերի արհեստ-արվեստով՝ թել մանած, Խորասանի խալիներ ստեղծած քանի՛-քանի՛ հարուցիչ-հատկանիշներով...

Ի մասնավորի տվյալ դեպքում խալի գործելուն ուղեկցած ձայնային հնչեղությամբ և վերձանումով = ձայնային-լսողական քանի՛ սը:

Եթե հիշում եք՝ «Չէ՛ նե չհիշեք»,– Չարենցն ու Բակունցը դարի, ասել է և սեփական գրական արվեստն ու առհասարակ արվեստները համարում էին սինթետիկ = սինկրետիկ-խառնածին: Դե՛, սիմվոլիզմ տերմինը սոցիոլոգիայի թակի տակ էր:

Իսկ հայերեն թարգմանությամբ և բառի իմաստային գերակայությամբ էլ՝ խառնածին միջուկում այլախոսական բառը միաձույլ է՝ այլաձայն հատկանիշից անբաժան՝ ինչպես այլագունայինը-այլատեսքայինը:

Արդեն իսկ ռոմանտիզմի ծոցում՝ եվրոպական պոեզիան XIX դարի ընթացքներով սիմվոլիզմը՝ անգամ իսկ տեսականորեն,– հունավորվելով, իրացնելով դավանում էր ձայնային հատկանիշի գերակայությունը. հենակետ ունենալով մեծապես հանճարեղ Դանտեի արվեստը: Թող մեծախոսություն չդիտվի, եթե ասենք = հայոց անտիկյան տոհմիկ մտածողության տարերքով՝ նոր ժամանակների վերագարթոնքով օրինաչափությունը նույն է: Հայր Ալիշանի «Նահապետի երգերի» = «Նուագքի» (1857-1858) խոսուն ցուցանիշով, որ «բառային երաժշտականությամբ» (Պ. Սևակ) անուրանալի ցուցանիշն են և Մ. Պեշիկթաշյանի ու Պ. Դուրյանի պոեզիայի: Բայց ինչու՞ չմտաբերենք հետագա ժամանակների, ասենք, Ղ. Աղայանի «Մանիք, մանիք իմ ճախարակ»՝ ի վերջո, երկձայն բանաստեղծությունը: Եվ այսպես մինչև Վ. Տերյանի արդեն ակնառու նվագայնությունը: Եվ սակայն, իզուր չվկայակոչվեց Պ. Սևակը:

Բայց պիտի դառնանք Ակ. Բակունցի ստեղծագործության երաժշտականությանը. ներողամտորեն շրջանցելով Բսահակյանի դարավերջի «Երգեր ու վերքերը» (1898, Աղեքսանդրապոլ). մանիներ, սուրահները... այլևայլ ժանրերով հանդերձ:

Ուրեմն պետք է սկսենք Սարոյանին բացատրությամբ ներկայացվող նույն «Լիբեր Արմենիերից» քաղաբերումներով = ահա՛, այսպիսիք. «Նրա (Արմենիերի.– Ալ. Չ.) հիշողության մեջ հետզհետե պայծառանում էր այն, որ քաղցր էր և սիրելի. մայրը, Միրզամը և քույրերը, փոքրիկ եղբայրը, նույնիսկ իրենց Բողարը, որի հետ խաղացել էր մանկության տարիներին: Բնչքա՛ն մանր և աննշան հիշողություններ էին զարթոնում. պռունկը կոտորած պղնձե ջամը նայում էր նրան երկար, շատ երկար և ինչպես հին ծանոթ նրան ասում էր. «դու ինձ չես մոռանա, Խաչեր, ինձ երբեք չես մոռանա...»: Այն կողմից դրնգում էր կարասը, որ ընկած

էր էլվանի տակ. «ապա ի նձ... հիշու՛մ էս՝ զլուխդ կռացնում էիր ներս և կանչում՝ դոն-դոն, իսկ էս միշտ արձագանքում էի քո ձայնին՝ դո՛ն... դո՛ն... դո՛ն...»: Այսպես խոսում էին Բակի քարերը, աղաքարը՝ որի վրա հայրը աղ էր ցանում, և տավարը լիզում էր աղը, հետո եզները քարն էին լիզում իրենց փշոտ լեզուներով՝ խըշը-խըշը, կարծես գերանդիով հնձում են չորացած խոտը: Երգում էին դռներն ու դռնակները, ամենքն իրենց հանգով. հացատան դռնակը՝ բարակ ու մեղմ, տան դուռը՝ ինչպես պառավ շուն՝ խոպոտ ու բամբ, իսկ ձմեռը, երբ դռան հետևից կախում էին թաղիք, տան դուռը խլանում էր: Բայց ամենից զիլ երգում էին դրսի դռները, որոնց սոնին որձաքարի մեջ էր. դռներն իրար էին գալիս, աջը միայն դամ էր պահում, իսկ ձախը զլում էր պարկապկուն, մինչև դռներն իրար գային և այն ժամանակ երկուսը միասին՝ դոմբ հա դոմբ խփում էին Աթա Թևանի թմբուկը:

Նրա (Լիբեր Արմենիերի.– Ալ. Չ.) հիշողության մեջ հետզհետե պայծառանում էր այն, և դառնը մոռացվում էր և մնում, որը քաղցր էր և սիրելի՝ քարերը, հին կարասը, պղնձե ջամբ, հայրենի խեղճ խրճիթը, պառավ շունը, Գոչգոչանի ջրվեժը, ընկուզենիների խշշոցը, Նովավոր աղբյուրի ոսկեկանաչ մամուռը և Ջանգուն, սիրտ մաշող Ջանգուն» (3, 323-324):

Կարդում էր Բակունցը = ունկնդրում է երիտասարդ Սարոյանը: Եվ պետք է որ պատկերացնեք = թե՛ հայոց կարոտի լեզվով – թևավոր հիշողությամբ ու երևակայությամբ յուր մոգական արվեստով քանի՛ քանի՛ ձայն է հնչեցրել Ակսելը = «բառային երաժշտականությամբ» զարմացրել-սքանչացրել Սարոյանին=առարկայական-անառարկայական ձայների քանի՛ «գործիքավորումով». հարմունիկ-ոչ հարմունիկ էլեւջներով, արձագանք-ձայնակցություններով, դարձդարձիկ-դինամիկ-խաղացկուն աղմկալի խաղերով. սահուն-կտրուկ-դրմբ-դրմբ կշռույթներով=փոխանցում-փոխադարձում-փոխակերպություններով... տարբեր-տարբեր ձայնադարձերով... Առանց վերապահության ուսանած-յուրացրած-ժառանգած ձեմարանական իր մեծ ուսուցիչներ Կոմիտասից ու Աբեղյանից. նրանց իմաստուն համար սերմանումներով ու դասերով... Բայց չէ թե... անմահ «Վերքի» ձայնային պարոսային-տիտանական «Ջանգիից»... Ուրեմն և հաշվենք. Բողարի ձայն, ջամի գրնգուն ձայն (այս «գրանգունը» շա տ է սիրում Ալեքսանդրը. անշուշտ, հայրենի Ջանգեգուրի պատվին...) ... կարասի խուլ-կիսախուլ դրնգուն-արձագանքով հանդերձ. քարերի ու լռության ձայն (ասել է՝ տիեզերական. առանձնապես հնչեղ հայոց երկնամերձ բարձրադիր-բարձրասլաց գերեզմանավայրերում). քարերից անասունների աղ լիզելու խըշը-խըշոցը... չորացած խոտհնձի ձայն, պառավ շան խոպոտ... դռների ու դռնակների բարակ ու... մեղմից՝ ձմեռվա խուլ = աջ կողմից դամ պահող, ձախից՝ դո՛մբ-դո՛մբ... Գոչգոչանի ջրվեժի գոչ-գոչ... Եվ վերջապես Ջանգիի անդնդախոր-սիրտ մաշող-աղեկտուր-բողոքավոր դողանջ... դարի վ-դարի վ:

Դե՛, սիրելի գրասերներ. հենց այս «ագդեցություններով» էր, որ Սարոյանի համար՝ «1935-ին աշխարհք փոխվավ, 35-են վերջ»: Մնում է պատկերացնել... իսկ նվաստիս ուժերից վեր է...

Հիրավի, տասնամյակներ շարունակ փաստորեն ընդհատակյա գործած, այլաբանության-այլախոսության վարժված, ծածկագրեր փոխանակած մեր սրբազան «Մատյան գնդի» պատկանյալները՝ խոսքը մեկ արած, իրար աչք մտած, իրար բերան թքած... հայոց դարձվածային հանգերով = միասնական-միահամուռ երդումով հաստատելով-հաստատում են հարագատ ժողովրդի անտիկյան մտածողությունը = տոհմիկ մտածելակերպը: Ըստ այդմ, նրանցից յուրաքանչյուրի կյանքի, գործունեության ու ժառանգության վերծանում-լուսաբանության շա տ ու շա տ անելիք-ասելիքներ-մեկնություններ-գնահատություններ կունենան սերունդները: Բայց, այնուամենայնիվ, Խ. Աբովյանին նվիրված Բսահակյան-Բակունց-Մարոյան փոխադարձված կծիկը՝ կմնա ամենանվիրականն ու ամենահետաքրքիրը:

Այդ իմաստով էլ, դե՛, մեղք չունեն, «մեղքը» իրենցն է. կարճ կապել չի լինում. կարիք է զգացվում նոր քաղաքերումների-համադրական անդրադարձների: Ասենք, այս անգամ էլ դիմելու Կ. Պասմաճյանի հետ 1975-ի մայիսի 25-ին Փարիզում վարած նույնպես շատ հետաքրքիր հարցազրույցից: Եվ այսպես Պասմաճյանը հիշեցնում է Մարոյանին. «Մամ էգոյի տան մեջ» գրքում Դուք ասում եք հետևյալը. «Այն, ինչ ես գրում եմ, այն ինչ ես երբևէ գրել եմ, այլաբանական է: Դա պատահեց անխուսափելիորեն: Ես Փոքր Ասիայի ծնունդ եմ, ուրեմն, իմ մտքում այլաբանականն ու իրականը շաղախվել են իրար: Ինձ համար յուրաքանչյուր իրականություն այլաբանական բնույթ ունի»: Եկեք այդ մասին խոսենք»: Եվ հետևում է Մարոյանի պատասխանը. «Ես ընդունում եմ դրա յուրաքանչյուր բառը...» (141): Եվ Պասմաճյանի հետ փոխադարձելով՝ շարունակում է. թե՛ «Յուրաքանչյուր (ճշտենք՝ ամեն.- Ալ. Ջ.) իրականություն այլաբանական է...», որին հետևում է՝ «...չմոռանանք, որ իմ պատմվածքները պատմվել են ինձ... լսեցի դրանք իմ հայրական և մայրական տատիկներից և Կարապետ Մարոյանից...» և այլն: Ապա և. «Ցավի, ընկճվածության և կամ մերժման հետ հիշողությունը շատ կանուխ է գալիս... «նախադրյալով՝ իրականի տպավորվածությունից և վերապրումից՝ «Հիշողությունը երևակայություն է» թո՛հչքով = սահմանումը ամփոփվում է = «Բսկ երևակայությունը վերհիշած իրականն է: Այսքանը» (141-142): Մարոյանական տողացի:

Եվ դարձյալ հիմա էլ կարիք է զգացվում համատեղել-համադրելու կարգով հրամայաբար քաղաքերել «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպից՝ դարձյալ դասականից դասական «Դեպի լյառն Մասիս», «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի» դրվագներում՝ երկձայն-քառաձայն... կիզակետային իննաձայն: (Չէ որ Կոմիտասն ուներ իննաձայն պատարագ և Գևորգյան ձեմարանում ստեղծել էր բազմաձայն երգչախումբ, ապա և ստեղծեց Կ. Պոլսում): Եվ Բակունցի գրչով նորանոր ձայներ. մայրական օրորոցային... դերվիշի ձայն... խալիների ձայն... կույր Սեյիդի ձայն... և «Գործ Մայրանա» դրվագում՝ Չարսու բազարի հյութեղ պատկերների հոլովումներ = վերջապես. «Պողպատի ու պղնձի սուր զրինգը խլացնում էր Չարսուի բազմաձայն ժխորը» նախադասությամբ հնչում է Կոմիտասա-բակունցյան «բազմաձայնը»-հնչեղ-համաձայնային...

Անշուշտ, նույնպես էլ գունային=բազմագույն=լուսա=ստվերային=բնապատկեր-բնատեսքային խառը-կիզակետային դինամիկ-դրամատիկ այլևայլ անգուգական էջեր հանճարեղ լուսավորչի հոգեղեն-ոգեղեն պաթոսին համահունչ բակունցյան կախարդական գրչով՝ մեկից մեկ կոչված հիացնելու-սքանչացնելու=խելքահան անելու երիտասարդ Մարոյանին: Բայց անկարելի է թե՛ «հուզախեղը» բաժանված չլինեն «Ծիրանի փողով»:

«Հազրո՛ղ, դու լա՛վ էիր ապրում քո գյուղում:

–Մեր քարափների վրա՞:– Եվ լռում է:

–Հեյ վա՛խ ջահելություն, թռավ...
Եվ նորից վերցնում է փողը:

Նվագում է այս անգամ ոչ թե լեռնականների կորովի երգը, որից բորբոքվում է արյունը,– այլ հովվական պարզ մի երգ: Կա և՛ թախիժ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, էլնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և՛ կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:

–Հաղ մի՛ երթամ տեսության մրր քարերին, մրր ձորերին, մրր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ-զուլալ ախաբսոոց պես գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բանձրանա երդիկներեն, իմեմ մրր լուս աղբրներեն, զիմ քրտինք կաթա մրր քարերու վրեն, մրր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ...
–Հազրո՛ղ, իսկ ու՞մ կտասս քո ծիրանի փողը:
–Զիմ փող կիտամ իմ քաջարժիվ թոռնիկին...» (1, 204):

Չյանբերդ, Չյանբերդ...

Քանց լուսին ամպի տակով,

Դու ջուր կերթաս ջուխտ դորակով... (1, 196):